

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

---

- ✓ 2007 թ. նոյեմբերի 13-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը մասնակցել են ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած ՄՈՆԵԿ ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների հանդիպմանը,
- ✓ 2007 թ. նոյեմբերի 15-16-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված բազմազգային ձեռնարկությունների և սոցիալական քաղաքականության վերաբերյալ սկզբունքների եռակողմ դեկլարացիայի 30-րդ տարեդարձին նվիրված բազմաֆորումին,
- ✓ 2007 թ. դեկտեմբերի 4-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Միջազգային միգրացիայի վիճակագրություն» թեմայով սեմինարին,
- ✓ 2007 թ. դեկտեմբերի 6-7-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Լյուքսեմբուրգում կայացած «Ժամանակակից վիճակագրությունը ժամանակակից հանրության համար» թեմայով կոնֆերանսին: